Օրվա դասի պլան

Վայոց ձորի մարզի Սարավանի հիմնական դպրոցի 1-ին դասարանի դասվար

Մարիամ Հակոբյան

Դասարան – Առաջին

Առարկա - Մայրենի

Թեմա - Ծ հնչյուն- տառի ուսուցում

Նպատակ- Կարդալու և գրելու սկզբնական կարողությունների զարգացում,դիտողականության և վերլուծական մտածողության կարողունակության զարգացում:Հնչյունի իմաստազատիչ արժեքի իմացության կատարելագործում,գրավոր խոսքի տեխնիկական, գրաֆիկական առանձնահատկությունները ընկալելու կարողունակության կատարելագործում:Տպագիր տեքստից ձեռագիր վերարտադրելու կարողունակության զարգացում:

Վերջնարդյունքներ – Սովորողը կատարի հնչյունային և վանկային վերլուծություն,սովորած և նոր ուսուցանվող տառը միավորի մեկ հնչյունային վանկային պատկերի մեջ, ստանա բառեր, կազմի բառակապակցություններև նադադասություններ:

Ուսուցանվող նոր հնչյունը առանձնացնի բառից , օգտագործի բառասկզբում, բառամիջում, բառավերջում, բաց և փակ վանկերում:Կատարի նաև խմբային աշխատանք տառադարաններով,գծապատկերներով:

Օգտագործվող նյութեր – Ծ հնչյուն- տառին համապատասխան նկարներ, պաստառներ, տառադարաններ, վանկային գծապատկերներ , Էլ. rեսուրս Learningapps Մայրենի <<Գտիր համապատասխան տառը>> :

Խաչվող հասկացություններ – Օրինաչափություն, պատճառ և հետևանք , կայունություն և փոփոխություն:

Միջառարկայական կապ – Կերպարվեստ, Տեխնոլոգիա, Երաժշտություն:

Դասի ընթացքը.

Ուսուցիչ	Սովորողներ
.Ներածական մասում նախորդ հնչյուն տառի հարցում, վերլուծություն , կազմակերպչական մասի ապահովում:	.Վերհիշում են անցած դասը , տառերը վերլուծում անցածը:
.Հիմնական մասում սովորողների ուշադրությունը հրավիրում է գրատախտակին շրջված նկարներին:Խաղային հանելուկ արտասանելով հերթով բացում է նկարները:	.Նայում են շրջված նկարներին, գուշակում նոր տառը, առաջարկված հանելուկը , մեծ ուրախությամբ կատարում խաղային առաջադրանքը:
.Հնչյուն- տառի ցուցադրումից հետո արտասանում , կրկնում է պաստառների վրա:	.Պաստառների վրա առանձնացնում են նոր Ծ հնչյուն – տառով սկսվող կամ պարունակող բառեր:
.Ծ հնչյուն – տառի գրությունը ցուցադրում է գրատախտակին,կանչում գրատախտակի մոտ սովորողներին:	. Գրատախտակի մետ գրում են նոր տառը, կազմում վանկային պատկերներ, բառեր, բառակապակցություններ, խաղում <<Արագ գուշակիր>> խաղը;
.Սովորողների հետ հարց ու պատասխանի միջոցով վերլուծում է նոր հնրյուն- տառը, առաջարկում երեխաներին ասել Ծ հնչյուն- տառով սկսվող բառեր, բառամիջում, բառավերջում նոր սովորած հնչյուն ունեցող բառեր:	. Կատարում են ֆիզկուլտ դադար `<,Աջ և ձախ>>,Learningapps –ի առ. կատարում:
. Առաջարկում է իր օգնությամբ կարդալ նոր դասը, կատարում հնչյունային աշխատանք, բառակապակցություններ կազմել տալիս, հանձնարարում է կազմել նախադասություններ:	Կարդում են նոր դասը, ընթացքում կատարում հնչյունային վերլուծություն, նորածանոթ բառերի կրկնություն, ամրապնդում, կազմում նախադասություններ:
.Աշխատանք է կատարում երեխաների տետրերում ուսուիցանվող տառի գրության վերաբերյալ:	.Տետրերում գրում են նոր տառը, բառեր և կապակցություններ:
.Առաջարկում է խմբային աշխատանք տառադարաններով, գծապատկերներով:	.Խմբային աշխատանքում պահպանում են միմյանց հետ աշխատելու կանոնները, տեղադրում տառերը տառադարանում:
.Դասի ավարտական մասում վարժեցնում, վերարտադրում է ուսուցանված նոր հնչյուն- տառը:	. Գծապատկերներում տեղադրում են նոր հնչյուն- տառը:Ամփոփում են դասը:

KAWS